Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

Կ-1330-21.04.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազդարարման համակարգի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-97-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «կազմակերպությունների» բառը փոխարինել «պետական և հանրային նշանակության, ինչպես նաև մասնավոր ոլորտի կազմակերպությունների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ազդարար՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սույն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է

ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ.

2) **ազդարարում՝** ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և հանրային նշանակության կազմակերպություններում, ինչպես նաև մասնավոր ոլորտի կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու մարմին.

3) **ներքին ազդարարում՝** պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և հանրային նշանակության կազմակերպություններում, ինչպես նաև մասնավոր ոլորտի կազմակերպություններում ազդարարելը.

4) **արտաքին ազդարարում՝** արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարելը.

5)**ազդարարում հանրությանը՝** զանգվածային լրատվության միջոցներում հրապարակման միջոցով ազդարարելը.

6) **ազդարարի հետ փոխկապակցված անձինք՝** ազդարարի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները.

7) **իրավասու մարմին՝** սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում թվարկված մարմիններ կամ մարմինների ղեկավարի լիազորած անձինք, որոնք սույն օրենքով սահմանված կարգով պարտավոր են ընթացք տալ ազդարարմանը.

8) **մասնավոր ոլորտի կազմակերպություն՝** կազմակերպություն, որի նախորդ տարվա աշխատողների միջին տարեկան թվաքանակը գերազանցել է 50-ը

(աշխատողների միջին տարեկան թվաքանակը հաշվարկվում է նախորդ օրացուցային տարվա յուրաքանչյուր ամբողջական ամսվա վերջին օրվա դրությամբ աշխատողների թվաքանակների հանրագումարը հարաբերելով ամբողջական ամիսների թվի վրա).

9) **հանրային նշանակության կազմակերպություն՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ներառված կազմակերպությունները, որոնք գործունեություն են իրականացնում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում.

10) **վնասակար գործողություն՝** գործողություն կամ անգործություն, որով ազդարարման համար ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձին հասցվում է վնաս՝ լուծելով աշխատանքային պայմանագիրը կամ նրան ավելի ցածր պաշտոնի փոխադրելով կամ նրա հաստիքը կրճատելով կամ նրան աշխատանքային առաջադրանքներ չտրամադրելով կամ արհեստականորեն հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնելով կամ նրա աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտելով կամ նրա նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառումը մերժելով կամ նրա աշխատավարձը կամ պարգևավճարները կրճատելով կամ նրա գույքին վնաս պատճառելով կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելով կամ նրան պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկելով, որը կվատթարացնի նրա գույքային դրությունը կամ չի արդարացնի գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները կամ ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ կիրառելով.

11) **կոռուպցիոն բնույթի դեպքեր՝** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցանքներ.

12) **հանրային շահերին ուղղված այլ վնաս՝** հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնաս, պետության միջոցների կամ գույքի վատնում, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «կոռուպցիոն բնույթի» բառերից հետո լրացնել «, փողերի լվացման, ահաբեկչական գործունեության ֆինանսավորման» բառերով:

Հոդված 4. Օրենքի 2-րդ գլխի վերնագրից հանելը «ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ» բառերը:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ներքին, արտաքին և հանրությանն ազդարարումն իրականացվում է սույն օրենքի 3-րդ, 4-րդ և 4.1-ին գլուխներով սահմանված կարգով:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով.

«1.1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում թվարկված մարմինները ստեղծում են ներքին ազդարարման ընթացակարգեր՝ ապահովելով ազդարարի գաղտնիության պահպանումը և ազդարարումների պատշաճ քննությունը:»,

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ներքին և արտաքին ազդարարման դեպքերի հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևը, ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»,

4) 3-րդ մասում «դեպքում հաղորդումների» բառերը փոխարինել «դեպքերի» բառով և «ձևակերպման,» բառից հետո լրացնել «ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերի,» բառերով:

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ներքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարի վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին ազդարարելով:

2. Ազդարարի անմիջական ղեկավարի վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձը ազդարարումը ստանալուց հետո պարտավոր է այն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին:»,

2) 3-րդ մասում՝

ա) 1-ին, 2-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ազդարարման» բառով,

բ) 2-րդ կետում «հարուցումը» բառից հետո լրացնել «վարույթի ընթացքում ողջամիտ պարբերականությամբ տեղեկացնելով դրա ընթացքի մասին» բառերով,

գ) 4-րդ և 5-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ստացված տեղեկությունների» բառերով,

3) 7-րդ և 8-րդ մասերում «հաղորդում» բառը փոխարինել «ազդարարում» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 8. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Արտաքին ազդարարումը և արտաքին ազդարարման վարույթը**

1. Արտաքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից նախարարություն միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով տվյալներ ներկայացնելու կամ անանուն եղանակով ազդարարելով:

2. Այն դեպքում, երբ արտաքին ազդարարումը ներկայացվել է այլ մարմնին կամ պաշտոնատար անձին, տվյալ մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է տեղեկացնել ազդարարումը ներկայացրած անձին արտաքին ազդարարումը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացնելու անհրաժեշտության մասին և ապահովել համապատասխան ուղղորդումը:

3. Գլխավոր դատախազությունն ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված՝ կոռուպցիոն բնույթի դեպքի, փողերի լվացման և

ահաբեկչական գործունեության ֆինանսավորման վերաբերյալ, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումների վերաբերյալ ազդարարումների հաշվառումը, քննարկումը, իրենց իրավասության շրջանակներում միջոցների ձեռնարկումը, հիմքերի առկայության դեպքում համապատասխան վարույթի հարուցումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

3.1. Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը:

3.2.Նախարարությունն ուսումնասիրում է Գլխավոր դատախազության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից չհաշվառված ազդարարումները և դրանք վերահասցեագրում է ըստ իրավասության՝ օրենքով սահմանված կարգով հաշվառելու կամ համապատասխան վարույթ հարուցելու նպատակով:

4. Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված ազդարարումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե ազդարարմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ազդարարումը ստուգելու նպատակով Գլխավոր դատախազությունն այն վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

6. Վարույթ իրականացնող մարմինը՝

1) ապահովում է ազդարարման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում ազդարարման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցում է վարույթ.

3) ապահովում է վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ստացված տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում ստացված տեղեկությունների իսկությունը ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազություն.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

8. Արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:

9. Արտաքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որն ընդունվելու պահից եռօրյա ժամկետում ծանուցվում է ազդարարին:

10. Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ:

11. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը սույն օրենքով նախատեսված կարգով ազդարարումը ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա իրավասու մարմինը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է ազդարարին:

12. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազության:

13. Վարույթն իրականացնող մարմինն ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով իրեն հասանելի և իր իրավասությանն առնչվող ազդարարումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:14. Միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «դեպքի» բառից հետո լրացնել «կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման» բառերով.

2) 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի» բառերը փոխարինել «նախարարության» բառով:

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Միասնական էլեկտրոնային հարթակն ապահովում է հասանելիություն նախարարությանը, Գլխավոր դատախազությանը, Մարդու իրավունքների պաշտպանին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:»:

4) 5-րդ մասում «հաղորդմանն» բառը փոխարինել «ազդարարմանն» բառով:

5) 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը» բառերը փոխարինել «նախարարությունը» բառով:

Հոդված 10. Օրենքի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 9.1-ին հոդվածում՝

1) վերնագրում «ազդարարման հաղորդումների» բառերը փոխարինել «ազդարարումների» բառով,

2) 1-ին մասում «հաղորդումների» բառը փոխարինել «ազդարարումների» բառով,

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վիճակագրության մեջ պետք է զետեղված լինեն ազդարարման վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ հետևյալ տողերի՝ ներքին, արտաքին և հանրությանը ներկայացված:»:

Հոդված 12. Օրենքի 9.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հաղորդումը» բառերը փոխարինել «ազդարարումը» բառերով,

2) 2-րդ և 9-րդ մասերում «հաղորդում» բառը փոխարինել «ազդարարում» բառով,

3) 4-րդ մասում «հաղորդումների» բառը փոխարինել «ազդարարումների» բառով,

4) 5-րդ մասում՝

ա) 1-ին և 2-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ազդարարման» բառով,

բ) 4-րդ և 5-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ստացված տեղեկությունների» բառերով:

Հոդված 13. Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և անհրաժեշտության դեպքում դիմել Ոստիկանություն ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու համար:»:

Հոդված 14. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «հաղորդում» բառերը փոխարինել «ազդարարում» բառերով:

Հոդված 15. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր և նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է:»:

2) 2-րդ մասի 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մասնավոր ոլորտի կազմակերպությունների համար նախատեսված ներքին ազդարարման վերաբերյալ կարգավորումները մինչև 2028 թվականի հունվարի 1-ը տարածվում են մասնավոր ոլորտի այն կազմակերպությունների վրա, որոնց նախորդ տարվա աշխատողների միջին տարեկան թվաքանակը գերազանցել է 250-ը:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

Կ-1330-21.04.2026-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազդարարման համակարգի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-97-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «կազմակերպությունների» բառը փոխարինել «պետական և հանրային նշանակության, ինչպես նաև մասնավոր ոլորտի կազմակերպությունների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ազդարար՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սույն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի,

մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ.

2) **ազդարարում՝** ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և հանրային նշանակության կազմակերպություններում, ինչպես նաև մասնավոր ոլորտի կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում սույն օրենքով նախատեսված իրավասու մարմին.

3) **ներքին ազդարարում՝** պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և հանրային նշանակության կազմակերպություններում, ինչպես նաև մասնավոր ոլորտի կազմակերպություններում ազդարարելը.

4) **արտաքին ազդարարում՝** արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) ~~Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն~~ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարելը.

5)**ազդարարում հանրությանը՝** զանգվածային լրատվության միջոցներում հրապարակման միջոցով ազդարարելը.

6) **ազդարարի հետ փոխկապակցված անձինք՝** ազդարարի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները.

7) **իրավասու մարմին՝** սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում թվարկված մարմիններ կամ մարմինների ղեկավարի լիազորած անձինք, որոնք սույն օրենքով սահմանված կարգով պարտավոր են ընթացք տալ ազդարարմանը.

8) **մասնավոր ոլորտի կազմակերպություն՝** կազմակերպություն, որի նախորդ տարվա աշխատողների միջին տարեկան թվաքանակը գերազանցել է 50-ը (աշխատողների միջին տարեկան թվաքանակը հաշվարկվում է նախորդ օրացուցային տարվա յուրաքանչյուր ամբողջական ամսվա վերջին օրվա դրությամբ աշխատողների թվաքանակների հանրագումարը հարաբերելով ամբողջական ամիսների թվի վրա).

9) **հանրային նշանակության կազմակերպություն՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ներառված կազմակերպությունները, որոնք գործունեություն են իրականացնում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում.

10) **վնասակար գործողություն՝** գործողություն կամ անգործություն, որով ազդարարման համար ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձին հասցվում է վնաս՝ լուծելով աշխատանքային պայմանագիրը կամ նրան ավելի ցածր պաշտոնի փոխադրելով կամ նրա հաստիքը կրճատելով կամ նրան աշխատանքային առաջադրանքներ չտրամադրելով կամ արհեստականորեն հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնելով կամ նրա աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտելով կամ նրա նկատմամբ խրախուսանքի միջոցների կիրառումը մերժելով կամ նրա աշխատավարձը կամ պարգևավճարները կրճատելով կամ նրա գույքին վնաս պատճառելով կամ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելով կամ նրան պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկելով, որը կվատթարացնի նրա գույքային դրությունը կամ չի արդարացնի գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները կամ ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցներ կիրառելով.

11) **կոռուպցիոն բնույթի դեպքեր՝** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցանքներ.

12) **հանրային շահերին ուղղված այլ վնաս՝** հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնաս, պետության միջոցների կամ գույքի վատնում, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «կոռուպցիոն բնույթի» բառերից հետո լրացնել «, փողերի լվացման, ահաբեկչական գործունեության ֆինանսավորման» բառերով:

Հոդված 4. Օրենքի 2-րդ գլխի վերնագրից հանելը «ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ» բառերը:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածում՝

3) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ներքին, արտաքին և հանրությանն ազդարարումն իրականացվում է սույն օրենքի 3-րդ, 4-րդ և 4.1-ին գլուխներով սահմանված կարգով:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով.

«1.1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում թվարկված մարմինները ստեղծում են ներքին ազդարարման ընթացակարգեր՝ ապահովելով ազդարարի գաղտնիության պահպանումը և ազդարարումների պատշաճ քննությունը:»,

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ներքին և արտաքին ազդարարման դեպքերի հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևը, ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»,

4) 3-րդ մասում «դեպքում հաղորդումների» բառերը փոխարինել «դեպքերի» բառով և «ձևակերպման,» բառից հետո լրացնել «ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերի,» բառերով:

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ներքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարի վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին ազդարարելով:

2. Ազդարարի անմիջական ղեկավարի վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձը ազդարարումը ստանալուց հետո պարտավոր է այն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին:»,

2) 3-րդ մասում՝

ա) 1-ին, 2-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ազդարարման» բառով,

բ) 2-րդ կետում «հարուցումը» բառից հետո լրացնել «վարույթի ընթացքում ողջամիտ պարբերականությամբ տեղեկացնելով դրա ընթացքի մասին» բառերով,

գ) 4-րդ և 5-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ստացված տեղեկությունների» բառերով,

3) 7-րդ և 8-րդ մասերում «հաղորդում» բառը փոխարինել «ազդարարում» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 8. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Արտաքին ազդարարումը և արտաքին ազդարարման վարույթը**

1. Արտաքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից նախարարություն ~~Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն~~ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով տվյալներ ներկայացնելու կամ անանուն եղանակով ազդարարելով:

2. Այն դեպքում, երբ արտաքին ազդարարումը ներկայացվել է այլ մարմնին կամ պաշտոնատար անձին, տվյալ մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է տեղեկացնել ազդարարումը ներկայացրած անձին արտաքին ազդարարումը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացնելու անհրաժեշտության մասին և ապահովել համապատասխան ուղղորդումը:

3. Գլխավոր դատախազությունն ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված՝ կոռուպցիոն բնույթի դեպքի, փողերի լվացման և ահաբեկչական գործունեության ֆինանսավորման վերաբերյալ, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումների վերաբերյալ ազդարարումների հաշվառումը, քննարկումը, իրենց իրավասության շրջանակներում միջոցների ձեռնարկումը, հիմքերի առկայության դեպքում համապատասխան վարույթի հարուցումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

~~Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտման, հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ստացված ազդարարումը վերահասցեագրում է՝ ըստ իրավասության:~~

3.1. Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը:

3.2.Նախարարությունն ուսումնասիրում է Գլխավոր դատախազության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից չհաշվառված ազդարարումները և դրանք վերահասցեագրում է ըստ իրավասության՝ օրենքով սահմանված կարգով հաշվառելու կամ համապատասխան վարույթ հարուցելու նպատակով:

4. Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված ազդարարումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-

հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե ազդարարմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ազդարարումը ստուգելու նպատակով ~~Հայաստանի Հանրապետության գգ~~լխավոր դատախազությունն այն վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

6. Վարույթ իրականացնող մարմինը՝

1) ապահովում է ազդարարման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում ազդարարման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցում է վարույթ.

3) ապահովում է վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ստացված տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում ստացված տեղեկությունների իսկությունը ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազություն.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

8. Արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:

9. Արտաքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որն ընդունվելու պահից եռօրյա ժամկետում ծանուցվում է ազդարարին:

10. Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ:

11. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը սույն օրենքով նախատեսված կարգով ազդարարումը ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա իրավասու մարմինը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է ազդարարին:

12. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազության:

13. Վարույթն իրականացնող մարմինն ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով իրեն հասանելի և իր իրավասությանն առնչվող ազդարարումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

14~~3~~. Միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «դեպքի» բառից հետո լրացնել «կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման» բառերով.

2) 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի» բառերը փոխարինել «նախարարության» բառով:

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.Միասնական էլեկտրոնային հարթակն ապահովում է հասանելիություն նախարարությանը, Գլխավոր դատախազությանը, Մարդու իրավունքների պաշտպանին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:»:

4) 5-րդ մասում «հաղորդմանն» բառը փոխարինել «ազդարարմանն» բառով:

5) 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը» բառերը փոխարինել «նախարարությունը» բառով:

~~Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասում «հաղորդմանն» բառը փոխարինել «ազդարարմանն» բառով:~~

Հոդված 10. Օրենքի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 9.1-ին հոդվածում՝

3) վերնագրում «ազդարարման հաղորդումների» բառերը փոխարինել «ազդարարումների» բառով,

4) 1-ին մասում «հաղորդումների» բառը փոխարինել «ազդարարումների» բառով,

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վիճակագրության մեջ պետք է զետեղված լինեն ազդարարման վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ հետևյալ տողերի՝ ներքին, արտաքին և հանրությանը ներկայացված:»:

Հոդված 12. Օրենքի 9.2-րդ հոդվածում՝

5) 1-ին մասում «հաղորդումը» բառերը փոխարինել «ազդարարումը» բառերով,

6) 2-րդ և 9-րդ մասերում «հաղորդում» բառը փոխարինել «ազդարարում» բառով,

7) 4-րդ մասում «հաղորդումների» բառը փոխարինել «ազդարարումների» բառով,

8) 5-րդ մասում՝

ա) 1-ին և 2-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ազդարարման» բառով,

բ) 4-րդ և 5-րդ կետերում «հաղորդման» բառը փոխարինել «ստացված տեղեկությունների» բառերով:

Հոդված 13. Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և անհրաժեշտության դեպքում դիմել Ոստիկանություն ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու համար:»:

Հոդված 14. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «հաղորդում» բառերը փոխարինել «ազդարարում» բառերով:

Հոդված 15. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ

վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր և նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է:»:

2) 2-րդ մասի 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16.

4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

5. Մասնավոր ոլորտի կազմակերպությունների համար նախատեսված ներքին ազդարարման վերաբերյալ կարգավորումները մինչև 2028 թվականի հունվարի 1-ը տարածվում են մասնավոր ոլորտի այն կազմակերպությունների վրա, որոնց նախորդ տարվա աշխատողների միջին տարեկան թվաքանակը գերազանցել է 250-ը:

6. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ~~վեց ամսվա~~ մեկ տարվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-1330-21.04.2026-ՊԻ-011/0), «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-13301 -21.04.2026-ՊԻ-011/0) ԵՎ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-13302 -21.04.2026-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ նախարարություն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ**	Առաջարկում ենք. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն» բառերը փոխարինել «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)» բառերով: Հաշվի առնելով, որ հակակոռուպցիոն քաղաքականության, այդ թվում՝ ազդարարման համակարգի վերաբերյալ օրենսդրական կարգավորումների մշակումը և դրանց հետագա կատարելագործումը վերապահված է Արդարադատության նախարարությանը, ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի վարումը նույնպես նպատակահարմար է վերապահել Արդարադատության նախարարությանը: Միասնական էլեկտրոնային հարթակի նպատակը միասնական և անվտանգ միջավայրում ազդարարումների ստացման,	**Ընդունվել է** Ըստ այդմ Նախագծերի հիմնավորումը լրամշակվել է:	**Ընդունվել է**

			հաշվառման, ազդարարի անանունության ապահովման և դրանք ըստ առարկայական ենթակայության իրավասու մարմիններին փոխանցման կազմակերպումն է: Միաժամանակ, հարթակի վարումը չի ենթադրում հաղորդումների ըստ էության քննության իրականացում և չի փոփոխում հաղորդումների քննության իրավասությունների գործող բաշխումը, քանի որ ստացված ազդարարումները նախարարության կողմից վերահասցեագրվելու են օրենքով նախատեսված իրավասու մարմիններին:		
2.	ՀՀ կառավարություն	«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված	Առաջարկում ենք. 1.Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն» բառերը փոխարինել «նախարարություն» բառով: 2. Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետյալ խմբագրությամբ. «3. Գլխավոր դատախազությունն ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված՝ կոռուպցիոն բնույթի դեպքի, փողերի լվացման և ահաբեկչական գործունեության ֆինանսավորման վերաբերյալ, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ	**Ընդունվել է** Ըստ այդմ Նախագծերի հիմնավորումը լրամշակվել է	**Ընդունվել է**

			սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների վերաբերյալ ազդարարումների հաշվառումը, քննարկումը, իրենց իրավասության շրջանակներում միջոցների ձեռնարկումը, հիմքերի առկայության դեպքում համապատասխան վարույթի հարուցումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:»: Գլխավոր դատախազության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերաբերյալ առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիություն ունեցող մարմինների շրջանակի օրենսդրական հստակեցման անհրաժեշտությամբ՝ վերջիններիս՝ օրենքով սահմանված իրավասություններին համապատասխան: 3. Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել նոր 3.1-ին և 3.2-րդ մասերով. «3.1. Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը: 3.2.Նախարարությունն ուսումնասիրում է Գլխավոր դատախազության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից չհաշվառված ազդարարումները և դրանք վերահասցեագրում է ըստ իրավասության՝ օրենքով սահմանված		

			կարգով հաշվառելու կամ համապատասխան վարույթ հարուցելու նպատակով:»: Մարդու իրավունքների պաշտպանի վերաբերյալ փոփոխության արդյունքում կարգավորումը կհամապատասխանեցվի «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման վերաբերյալ կարգավորումներին: Ինչպես նաև Արդարադատության նախարարությանը տրվում է չհաշվառված ազդարարումների վերահասցեագրման լիազորություն: 4. Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասում հանել Հայաստանի Հանրապետության բառերը: 5.Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել 13-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «Վարույթն իրականացնող մարմինն ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով իրեն հասանելի և իր իրավասությանն առնչվող ազդարարումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:»: Նշված լրացումը նպատակ ունի հստակեցնել իրավասու մարմինների գործառութային պարտականությունները ազդարարման համակարգում և ապահովել		

			վերահասցեագրված հաղորդումների նկատմամբ միասնական, պատշաճ և համակարգված արձագանք:		
3.	ՀՀ կառավարություն	«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված	Առաջարկում ենք. Նախագծի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում «դեպքի» բառից հետո լրացնել «կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման» բառերով. 2)2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի» բառերը փոխարինել «նախարարության» բառով: 3)4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Միասնական էլեկտրոնային հարթակն ապահովում է հասանելիություն նախարարությանը, Գլխավոր դատախազությանը, Մարդու իրավունքների պաշտպանին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:»: 4) 5-րդ մասում «հաղորդմանն» բառը փոխարինել «ազդարարմանն» բառով: 5)6-րդ մասում «Հայաստանի	**Ընդունվել է** Ըստ այդմ Նախագծերի հիմնավորումը լրամշակվել է	**Ընդունվել է**

			Հանրապետության կառավարության լիազոր մարմինը» բառերը փոխարինել «նախարարությունը» բառով:» «Փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման» բառերով լրացումը առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում առկա չի եղել, ուստի դրա ներառումը երկրորդ ընթերցման փուլում դիտարկվում է որպես տեխնիկական բնույթի վրիպակի շտկում: Նախագծում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը» բառերի փոխարինումը «նախարարությունը» բառով՝ նպատակ ունի հստակեցնել լիազոր մարմինը, այն է՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը՝ Արդարադատության նախարարությանը: Նշյալը կապահովի իրավական կարգավորման որոշակիությունը և կհամապատասխանի Արդարադատության նախարարությանը վերապահված լիազորություններին: Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի նոր խմբագրությամբ շարադրմամբ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին ապահովվելու է հասանելիություն Արդարադատության		

			նախարարությանը, Գլխավոր դատախազությանը, Մարդու իրավունքների պաշտպանին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Առաջարկում ենք նաև՝ Նախագծից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման 6 ամիս ժամկետը փոփոխել 1 տարի ժամկետի:		
4.	ՀՀ կառավարություն	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի 1-ին հոդվածներից հանել «(այսուհետ՝ «Օրենք»)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծերի հետագա դրույթներում համապատասխան օրենքներին այլևս հղում չի կատարվում, ուստի նշված ձևակերպումն ավելորդ է:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**